



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Գևորգ Գյոզայանի, Երվանդ Վարոսյանի, Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեծլումյանի, Մարտուն Փանոսյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Նիկոլայ Բաղդասարյանի, Ռուբեն Հակոբյանի և Սիմոն Բաբայանի,

քննության առնելով փաստաբանների վերապատրաստման և փաստաբանության կայացման հարցերում Պալատի հետ արդյունավետ համագործակցության փորձ ունեցող կազմակերպություններին Պալատի նախագահի նախաձեռնությամբ՝ պարզեցված կարգով հավատարմագրելու հարցը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի Պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/7-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստում իրականացնող հաստատությունների հավատարմագրման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 2.6. կետի պահանջներով՝ միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մեկ տարի ժամկետով հավատարմագրել ներքոնշյալ կազմակերպություններին՝

▪ **Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA CEELI Inc.) հայաստանյան ներկայացուցչություն,**

▪ **Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակ,**

▪ **Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակ,**

▪ **Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) հայաստանյան գրասենյակ,**

▪ **«Փաստաբանների միջազգային միություն (համագործակցություն)» հասարակական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչություն:**

2. Սահմանել, որ նշված կազմակերպությունները վերապատրաստման

21 մարտի 2014թ.

թիվ 8/8-Ա

**դասընթացները և դասընթացավարներին նախապես պետք է համաձայնեցվեն
ՀՀ փաստաբանների պալատի հետ:**

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

**21 մարտի 2014թ.
թիվ 8/8-Ա
ք.Երևան**